

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 36/7

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.05.2018թ. N4100151 ակտի դեմ Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը հայտնում է, որ մեկ տարի է ինչ գործում է և բողոքարկում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի N4100151 ակտը առ 04.05.2018թ.: Այսպես, երկու հարկային տեսուչներ առանց ծառայողական վկայականներ ներկայացնելու հայտարարել են, որ հարկային տեսչությունից են և, որ առևտրի կետից կատարվել է 1900 դրամ արժողությամբ (1 հատ մետր) գնում, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Իրենց կողմից անմիջապես ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 5750 դրամ ընդհանուր գումարով, որում կտրոնների քանակը հինգն էր: Տեսուչը 1900 դրամ մուտքագրել է ՀԴՄ և դուրս բերել կտրոնը:

Այնուհետև Ա/Ձ Լամարա Գաբրիելյանին ծանուցվել է, որ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի մեկ տարվա ընթացքում 2-րդ անգամ կտրոն չտրամադրելու համար տուգանվում է 300.000 դրամ:

Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը հայտնում է նաև, որ 2017թ. նոյեմբերին իրոք կտրոն չտրամադրելու համար տուգանվել է ու այդ տուգանքը մի կերպ վճարել 2018թ. հունվարին: Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը զարմացած է, որ 4 ամիս հետո կրկին ստուգում է բացվել իր մոտ: Ձմռան ամիսներին շինանյութի վաճառքն ընկնում է և բնականաբար շրջանառության աճ չէր կարող գրանցվել: Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը տարածքը վարձակալում է և այդ առևտրային գործունեությունն իր ընտանիքի միակ եկամտի աղբյուրն է:

Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը կազմված արձանագրության, ապա կազմված N4100151 առ 04.05.2018թ. ակտի հետ համաձայն չէ և բողոքարկում է այն, քանի որ այդ օրը նա խանութը ուշ է բացել և բոլոր կտրոնները տրամադրել է: Բացի այդ, 1900 դրամ արժողությամբ մետր չի ունեցել: Ընդ որում, հինգ կտրոնների առանձին-առանձին գումարները չեն երևում: Այնուհետև 18.05.2018թ. 5 օրով կասեցվել է խանութի գործունեությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը խնդրում է անվավեր ճանաչել N4100151 առ 04.05.2018թ. ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 19.02.2018թ. N4100151 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի մոտ կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.05.2018թ. N4100151 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Վազգեն Ավագյանի կողմից 06.03.2018թ. ժամը 13:35-ին ք.Երևան, Միկոյան 23/1 ՀԳՏ շին. հասցեում գործող մանրածախ առևտրի կետից կատարվեց գնում 1900 դրամի չափով՝ 1 հատ մետր, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի կողմից գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:38-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 5750 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1900 դրամը, ժամը 13:39-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը:

Ստուգմամբ պարզվեց, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի պահանջները: Արդյունքում կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված տուգանքը՝ 300.000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Իր հերթին, ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 17-րդ կետի համաձայն՝ Պատասխանատու անձը պարտավոր է՝

1) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել գումարը, որոշել ընդհանուր գումարն ու տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն.

2) ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին

ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել կտրոն, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակելու նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող կտրոն:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկային մարմնի կողմից նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը նշեց, որ Ակտում հիշատակված գնումն իր մոտից չի կատարվել: Մինչև նույն ժամանակ, նա նշեց նաև, որ օրվա ընթացքում գործ է ունենում բազմաթիվ հաճախորդների հետ և իրականացվող առևտրի ընթացքում ստեղծվում են տարբեր իրավիճակներ, որոնց ընթացքում հնարավոր է լինեն դեպքեր, երբ իր կողմից թյուրիմացաբար (ոչ միտումնավոր) ՀԴՄ կտրոն չտրամադրվի:

Հանձնաժողովի անդամների հարցին, թե տեսագրվում է արդյոք խանութի տարածքը, Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը նշեց, որ այո: Հանձնաժողովի անդամների հաջորդ հարցին, թե կարող է արդյոք տրամադրվել Ակտում հիշատակված գնման վերաբերյալ տեսագրությունը, Ա/Ձ Լամարա Գաբրիելյանը նշեց, որ այն չի պահպանվել: Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի կողմից տրամադրվել է Հանձնաժողովի նիստի նախորդ օրվա տեսագրությունը, որն ուսումնասիրվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում իրականացված ստուգմամբ հիմնավորվել է Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի կողմից ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների դրույթները խախտվելու հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.05.2018թ. N4100151 ակտի դեմ Ա/Ձ Լամարա Գաբրիելյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ